ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9 ՓԵՏՐՎԱՐԻ
2023 թ.
№ 2 (1100)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Ձմեռային հանգիստ՝ Աղավնաձորում

Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազան փետրվարի 1-5-ը իր հյուրընկալ դռներն էր բացել ապագա մանկավարժների առաջ. տարբեր ֆակուլտետների վեցական ուսանողներ, ընդամենը՝ 60 հոգի, այդ թվում՝ հայրենի սահմանները պաշտպանած տղաներ, ինչպես նաև համալսարանական ավագ դպրոց-վարժարանի մեկ սովորող:

Ձմեռային հնգօրյա հանգիստ՝ հագեցած ուսանողական հետաքրքիր առօրյայով: Ուսանողները մասնակցեցին սեմինար-քննարկումների, սպորտլանդիաների ժամանցային, ձմեռային խաղերի, ազգային պարերի ուսուցման, միաժամանակ նշեցին Սուրբ Սարգսի տոնը, խաղացին Քվեսդ:

Աղավնաձորյան հանգստի ընթացքում ուսանողներիին հանդիպեց Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով ՀՊՄՀ պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը: Պրոռեկտորը խոսեց գիտելիքի ու կրթության կարևորության մասին, հավելելով՝ եթե ուսանողներից յուրաքանչյուրը մեկ քար ավելացնի մեր երկրի հզորացման, զարգացման գործին, ապա կունենանք աշխարհի ամենալավ երկիրը:

Մարիաննա Հարությունյանը ուսանողների հետ խոսեց ուսուցչի ժամանակակից կերպարի և առաքելության մասին, նաև հորդորեց՝ ուշադրություն դարձնել օտար լեզուների ուսումնասիրմանը՝ ժամանակակից աշխարհում հաջողության հասնելու համար:

Պրոռեկտորը զրույցի վերջում տեղեկացրեց առաջիկա՝ «Իմ երազանքների լսարանը» հետաքրքիր ծրագրի մասին՝ վստահեցնելով, որ նախագծում հաշվի կառնեն ուսանողների առաջարկությունները:

ՀՊՄՀ ռեկտորի նախկին ռեֆերենտ, ՈՒԽ նախկին նախագահ, այժմ ՀՊՄՀ ասպիրանտ Ներսիկ Մարգարյանը վարեց սեմինար-քննարկում՝ նվիրված արժեբանությանն ու ազգային արժեքներին:

«Աշխատանքային իրավունքների պաշտպանությունն առաջին աշխատավայրում» թեմայով սեմինար անցկացրեց ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպության ղեկավար Էդիկ Գուլյանը: Սեմինարի ընթացքում նա ուսանողներին ներկայացրեց արհմիությունների գործառույթները, միջազգային իրավական նորմերը, հայկական օրենսդրությունը, մասնավորապես՝ Աշխատանքային օրենսգիրքը:

Ֆիդբեքի նպատակով սեմինարի ավարտին անցկացված հարցման արդյունքների վերլուծությունը վկայեց, թե որքան արդյունավետ էր սեմինար-քննարկումը, և թե որքան բան սովորեցին ուսանողներն աշխատանքային իրավունքների ոլորտից:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի հայցորդ Արեն Ալավերդյանն էլ ուսանողներին ծանոթացրեց ժեստերի լեզվին, նրանց սովորեցրեց թրենդային երգեր՝ ժեստերի լեզվով:

«Ձմեռային հանգիստ» ծրագիրն իրականացվում է արդեն 10-րդ տարի. ի տարբերություն մյուս բուհերի, Մանկավարժականի ուսանողներն այս ծրագրից օգտվում են անվճար»,-ասաց ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը:

Ուսանողների «Ձմեռային հանգիստ» ծրագիրն ավարտվեց, բայց մնացին նոր ծանոթությունների, հետաքրքիր հանդիպումների ու միջոցառումների մասին գեղեցիկ հուշերը, որոնք անպայման կնպաստեն առաջիկա ուսումնական գործընթացին:

Քանակն արտացոլում է հասարակության խնդիրները

Փետրվարի 2-ին ՀՀ ՊՆ Վգ Սարգսյանի անվան ռազմական համալսարանի ներկայացուցչական կազմին՝ համալսարանի պետ Արթուր Երոյանի գլխավորությամբ, ընդունեց ՀՊՄՀ ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

Հանդիպմանը ներկա էին համալսարանի պրոռեկտորներ Նաիրա Սաֆարյանը, Մարիաննա Հարությունյանը, Մարիամ Իսպիրյանը և ռեկտորի խորհրդական Հակոբ Թադևոսյանը:

Կողմերը քննարկեցին համագործակցության հնարավորություններն ուսումնագաստիարակչական և գիտակրթական ոլորտներում:

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետ Արթուր Երոյանն ակնկալում է Մանկավարժական համալսարանի աջակցությունը՝ ուժային կառույցի դասախոսների վերապատրաստում մանկավարժական նորարարական մեթոդների ձևաչափով, վարպետության դասեր, լաբորատորիաներից օգտվելու հնարավորություն, ուսանողական համատեղ ճամբարներ, հետազոտական աշխատանք-

➤2

Բանակն արտացոլում է հասարակության խնդիրները

➤1 ների համատեղ իրականացում:

«Ձեր համալսարանի ռազմական դասախոսներն ունեն գիտելիքները փոխանցելու պրակտիկ հմտությունների և մեթոդական աջակցության, փորձագիտական չափորոշիչների վերանայման կարիք»,- նկատեց ռեկտոր Սրբուհի Գևորգյանը:

Սրբուհի Գևորգյանը ուժային կառույցի ղեկավարությանը ներկայացրեց համալսարանի առաջնահերթությունները՝ ընդգծելով հիմնական ուղղվածությունները: Բուհի ղեկավարն առաջարկեց համագործակցել բնագիտական, հասարակագիտական և պատմագիտական ուղղություններով՝ կազմակերպելով համատեղ միջոցառումներ, ներկայացրեց բուհի լաբորատորիաները, այդ թվում՝ ֆիզիկայի ամբիոնի՝ տարածաշրջանում եզակի լաբորատորիան, որտեղ մագիստրոսների հետազոտական կարողություններն են զարգացնում, և որը կարող է օգտակար լինել նաև ռազմական կուրսանտների համար:

«Մենք ունենք կրթության կարիք, դպրոցներից մեզ մոտ գալիս են ցածր մակարդակ ունեցող շրջանավարտներ,- ասաց Արթուր Երոյանը:- Ուսանողներին պետք է որոշակի մակարդակի հասցնել, բարձրացնել կրթական ցենզը»:

«Բանակը հասարակության մասն է և արտացոլում է հասարակության խնդիրները»,-համոզված է ՀՊՄՀ ռեկտորը:

Մերօրյա հրատապ խնդիրների քննարկումից հետո ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը և ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետ Արթուր Երոյանը ստորագրեցին համագործակցության հուշագիր, որով ամրագրեցին՝ կազմակերպել ուսանողների (կուրսանտների) ուսումնական և ուսումնաարտադրական պրակտիկաները:

Հուշագրի համատեքստում երկուստեք կքննարկվեն ատենախոսությունների գիտական թեմաներ, կիրականացվի մագիստրոսական թեզերի ղեկավարում, կվերապատրաստվեն դասախոսներ, փոխադարձ կշնորհվեն գիտական կոչումներ, կկազմակերպվեն համատեղ գիտական կոնֆերանսներ, ուսումնական պարապմունքներ՝ գործնական և լաբորատոր, դասախոսություններ, կպատրաստվեն գիտամանկավարժական կադրեր:

Գնդապետ Արթուր Երոյանը կարևորեց նաև մի շարք առարկաների գծով ռազմական համալսարանի ուսանողների ներգրավվածությունը ՀՊՄՀ դասապրոցեսին, համատեղ լաբորատոր աշխատանքների կազմակերպումը:

Ռեկտորը կարևորեց մանկավարժական մայր բուհի մասնակցությունը էքնիկ տեսակի պահպանման և մատաղ սերնդի ռազմական պատրաստվածության գործում՝ վստահեցնելով, որ այդ հարցում երկու բարձրագույն ուսումնական հաստատությունները կփոխլրացնեն իրար:

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարուժան Հովհաննիսյանն արժանացել է Խաչատուր Աբովյան մեդալի

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարուժան Հովհաննիսյանը ծնվել է 1952 թվականին, Երևանում: Ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, որտեղ աշխատում է 1995 թվականից:

Կենսագրության էջերը հարուստ են ու հետաքրքիր: Անվանի կենսաբանի 28 տարվա աշխատանքային փորձը Մանկավարժականում ավելի քան խոսուն է. շուրջ 100 գիտական հոդված, 6 գիրք, մեծ կենսափորձ, որ տարիներ շարունակ փոխանցել է սերունդներին:

ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի 036 «Կենդանաբանություն, մակաբուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտական խորհրդի անդամ, Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հանձնաժողովի փորձագետ, Հայ առաքելական եկեղեցու սոցիալական տներում բնապահպանական ծրագրերի փորձագետ. շարքը կարելի է շարունակել

…Վարուժան Հովհաննիսյանն անմնացորդ նվիրումով տրվել է այն ոլորտին, որի ջատագովն է:

Հետաքրքիր մարդ, հետաքրքիր գիտնական, ում կողմից հայտնաբերված գիշաճաճը միջատաբանական անվանարկման միջազգային ընկերության կողմից անվանվել է «Dilichopus oganesyani» Nebogov, 2004:

- Ներկայացեք, խնդրեմ, պարոն Հովհաննիսյան:

- Ավարտել եմ Մանկավարժականի Կենսաբանաքիմիական ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի բաժինը, որից հետո ընդունվել եմ ԳԱԱ Կենսաբանության ինստիտուտի (վերանվանվել է Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն) ասպիրանտուրան: Նովոսիմբիրսկ քաղաքում 1989 թվականին պաշտպանել եմ թեկնածուական:

- Ո՞րն էր Ձեր գիտական հետազոտությունների թեման:

- Զբաղվել եմ արևածուժ միջատների կողմից հիվանդությունների տարածման, նրանց դեմ կենսաբանական պայքարի մեթոդների խնդիրներով ու բացահայտումներով, նաև էկոլոգիական կրթության և դաստիարակության հարցերով:

- Տարիներ առաջ Ձեր անմիջական մասնակցությամբ բուհում ստեղծվեց էկոլոգիայի ամբիոն…

- Այո, 1995 թվականին մի խումբ նվիրյալներով՝ Նշան Մարգարյան, Ռուբիկ Մկրտչյան, Թելման Ոսկանյան, Աղվան Հովհաննիսյան, կարողացանք ձևավորել էկոլոգիայի և բնապահպանության ամբիոն՝ առարկայական շատ ժամանակակից ու հարուստ ցանկով:

Երբ մեր շրջանավարտները սովորում են արտասահմանյան տարբեր երկրների բուհերի մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում, օտարերկրյա մասնագետները զարմանում են, որ Մանկավարժական համալսարանում նման առարկաներ են դասավանդվում:

Ամբիոնն ստեղծեցինք իսկապես պրոֆեսիոնալների խմբով:

Ամբիոնը տարիների ընթացքում վերանվանվեց էկոլոգիայի և կայուն զարգացման: Այժմ ամբիոնը հաջողությամբ ղեկավարում է իմ ուսանողուհիս՝ Սիրինե Շողերյանը:

Ես շարունակեցի իմ հետազոտությունը, բայց եթե առաջ զբաղվում էի արյունածուծների մի խմբով, ապա այսօր զբաղվում եմ բոլոր արյունածուծ միջատների ուսումնասիրությամբ:

- Ինչքանո՞վ է հրատապ այդ բնագավառի ուսումնասիրությունը:

- Դա շատ հրատապ հետազոտությունների բնագավառ է, որովհետև սահմանամերձ երկիր լինելով, մանավանդ այս քաղաքական պայմաններում, նկատի ունեմ անցուդարձը, հետազոտում ենք նրանց հիվանդություններ տարածելու հնարավորությունները: Հիշենք, օրինակ, 2005-ից 2007 թվականներին Հայաստանում եղավ մալարիայի աննախադեպ մեծ քանակությամբ բռնկում, մենք ունեցանք 500-700 դեպք, սահմանների բացման պատճառով, և դրանք բոլորը դրսից բերովի էին, չնայած մեզ մոտ կային այդ մալարիայի մոծակների տեսակներ: Երբ մալարիայով հիվանդը գալիս է, մոծակը նրան խայթում է՝ արդեն տարածվում է բնության մեջ: Այդ ուղղությամբ ուսումնասիրությունների հրատապությունն ավելի մեծացավ, երբ Հարավային Ամերիկայում գրանցվեց «զիկա» հիվանդությունը, որն առաջացնում է գենետիկական խանգարում կանանց մոտ. հղիության 5-րդ ամսից հետո առաջանում է միկրոցեֆալյա սինդրոմ, գիգանտ գեներ կան, որոնք 5-րդ ամսից սկսում են պտղի ուղեղի ձևավորումը, իսկ «զիկա» հիվանդությունը խանգարում է այդ գեների գործունեությանը, և երեխան ծնվում է փոքրիկ ուղեղով:

2012 թվականին ես պաշտպանեցի դոկտորական ատենախոսություն Երևանում, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում, վերը նշված թեմայի ավելի լայն սպեկտորով:

- Ի՞նչ գրքեր եք ստեղծել ձեր գիտամանկավարժական գործունեության ընթացքում:

- Ունեմ 6 բուհական ուսումնամեթոդական ձեռնարկ՝ նվիրված տեսական էկոլոգիային և մի շարք այլ հարցերի, շուրջ 100 գիտական հոդված: Վերջին տարիներին հոդվածներ եմ տպագրել բարձր վարկանիշային ամսագրերում:

- Դուք 100-ամյա համալսարանի հոբելյանական տարվա ուղեկիցն եք, դա հազվադեպ իրողություն է…

- Ես հպարտ եմ, որ ավարտել եմ Մանկավարժականը, հաճույքով եմ աշխատում համալսարանում:

Հպարտությամբ պետք է ասեմ, որ մեր հարյուրավոր շրջանավարտներից 23-ն աշխատում են ակադեմիական տարբեր ինստիտուտներում և արդեն պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, մի քանիսն էլ՝ դոկտորական: Մենք նպաստում ենք սահուն սերնդափոխությանը:

- Ի՞նչ զգացողություններ ունեցաք, երբ ստացաք համալսարանի բարձրագույն պարգևը՝ «Խաչատուր Աբովյան» մեդալը:

➤4

Բանակը հայոց պետականության գոյության գրավականն է

Պատմությունն առաջին և ամենամեծ ուսուցիչն է, ումից սերունդները սովորում են… 21-րդ դարում մենք դասեր առանք պատմությունից՝ պատերազմ, մարդկային կորուստներ, շրջափակում… Այո, պատմությունն առաջին և ամենամեծ ուսուցիչն է…

Բանակի 31-րդ տարեդարձին նվիրված միջոցառում էին պատրաստել համալսարանական №57 հիմնական դպրոցի 7բ դասարանի աշակերտները՝ դասղեկ Մելինե Միքայելյանի գլխավորությամբ: Միջոցառման ասելիքն ու գաղափարախոսությունն այնքան մերօրյա էր…Այն, ինչ տեսան ու լսեցին 21-րդ դարի երեխաներն իրենց տարածաշրջանում, սարսափելի էր…

Բեմի վրա երկու տարբեր կերպարներ են, որոնցից մեկը որոշում է անհապաղ մեկնել պատերազմ՝ պաշտպանելու հայրենիքի սահմանները, անկախ հարազատների՝ սահման չգնալու հորդորներից, մյուսը տագնապած ու վախվորած փորձում է թաքնվել, խուսանավել վերահաս վտանգներից, բայց նրան չ ե ն խրախուսում ընկերները, անգամ սիրած աղջիկը վերադարձնում է մատանին…-Վերջինս կորցնում է շրջապատի մարդկանց վստահությունն ու սերը և շուտով հասկանում՝ պետք է գնալ պատերազմ… Որովհետև հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուրի սրբազան գործն է. հայրենասիրությունը պետք է յուրաքանչյուր հայի արյան ու գենի մեջ լինի…

36 յոթերորդցի, 36 աշակերտ բեմի վրա զինվորի հագուկապով ներկայացնում են իրենց մտքերն ու հույզերը, մարտական երգ ու պարով հայրենասերի իրենց կերպը դրսևորում.

«Ամեն ինչ կարելի է ունենալ, հայրենիքը մեկն է՝ աչքի լույսի պես պետք է պահել…»:

Հայաստան, Արցախ բառերն են աշակերտների շուրթերից հնչում ողջ ընթացքում՝ որպես սրբազան երդում, որպես կարոտ ու պայքարի կանչ:

Հայոց բանակի տոնը դպրոցականները խորհրդանշում են հայրենիքի հանդեպ պարտքի ու նվիրումի խոստումներով, ներկայացնում իրենց գիտելիքները հայոց բանակի կազմավորման մասին, մեջբերում կարևոր դրվագներ, հետ գնալով դեպի 1992 թվականի հունվարի 28՝ դեպի բանակի ստեղծման ակունքը:

Որպես հայրենիքի ապագա զինվորներ՝ նրանք վստահ են՝ մենք ունենք մարտունակ բանակ, ամուր ոգով զինվորներ ու հայրենիքի նվիրյալներ, որ «յուրաքանչյուր զինվորի մեջ մաքառելու իմաստնությունը կա», որ «բանակը հայոց պետականության գոյության գրավականն է, հայ ժողովրդի հավատն է ու հպարտությունը»:

Հայոց բանակում ծառայելն ամեն հայի առաքելությունն է ու պատիվը՝ բարձրաձայնում են ապագա զինվորները, ապա հպարտորեն ասում՝ շնորհավո՛ր տոնդ, հայոց բանակ, շնորհավո՛ր տոնդ, իմ զինվոր եղբայր:

Բեմն ու դահլիճը լցվում են հայ զինվորին փառաբանող խոսք ու երգով՝ ես

Անփորձանք լինես դու հայ զինվոր,
Քո խիզախ անունը մեր սրտում է,
Մերօրյա հերոսն ես փառավոր…»:

Եվ զինվորը վերադառնում է…

Դպրոցականների խոսքն ու երդումը վստահեցնող էր՝ սահմանին կանգնած զինվորին արժանի հերթափոխ է մեծանում: Արժանի, որովհետև նրանց թիկունքում ուսուցչական հրաշալի կոլեկտիվն է, որ դաստիարակում է հայրենասեր սերունդ:

«Վերջին տարիներին մենք մեր տոները նշում ենք մեր տղաների սխրանքների շնորհիվ,-ասում է դպրոցի ռազմագիտության ուսուցիչը,-համոզված եմ՝ դուք եք լինելու այն սերունդը, որ հաղթանակներ պիտի կռի»:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը հավաստում է՝ դպրոցի յուրաքանչյուր միջոցառում կոլեկտիվի բոլոր անդամների

հավատում եմ քո ոգուն ու քաջությանը, և խաղաղության ձգտումը մարմնավորող խոսքերով՝ թող հայ մայրերի աչքերը երբեք չարցունքոտվեն:

Խորհրդանշական էր նաև միջոցառման ավարտը, ասելիքը՝ անչափ հուսադրող.

«Հայրենիքը մոր պես աղոթում է, համագործակցության ու նվիրումի արդյունք է:

Նա շնորհակալություն է հայտնում յոթերորդցիներին՝ ներկաներին պարգևած հույզերի ու գեղեցիկ կատարումների համար, շնորհավորելով բոլորին հայոց բանակի տոնի առթիվ.

Շնորհավո՛ր տոնդ, հայոց բանակ:

Նրա ժպիտը մնաց դպրոցի պատերի ներսում

Մանկավարժական համալսարանի ավագ դպրոց-վարժարանը երեք զոհ տվեց Արցախի պատերազմին՝ երեք քաջ զինվոր ու հերոս՝ Տիգրան, Ազատ, Վոլոդյա:

Հայոց բանակի կազմավորման 31-րդ տարեդարձին նվիրված միջոցառումն ավելի քան հիշատակի ու երախտագիտության տուրք էր՝ նվիրված Վոլոդյային, ում դասընկերները կարճ Վլե էին կոչում: Լուսավոր ու ժպտադեմ այդ տղան երեք տարի վարժարանում սովորելուց հետո ընդունվեց Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության բաժին: Սովորեց ընդամենը մեկ կիսամյակ: Չհասցրեց իրականացնել իր երազանքները, բայց հասցրեց հերոսանալ, նահատակվել հայրենիքի համար:

Վարժարանի հերոսների հիշատակի պատին ևս մեկ անուն ավելացավ՝ Վոլոդյա Աբրահամյան:

Ու թեև միջոցառումը վարող աշակերտները ներկայացնում էին հայկական բանակի կազմավորման դրվագներ ու փաստեր, հայոց բանակի ուժն ու ոգին մարմնավորող խոսքեր ասում, միևնույն է, բոլոր ելույթներից ու գեղարվեստական կատարումներից անասելի թախիծ էր ծորում՝ մարմնավորելով Արցախի պատերազմի հերոսներին, նրանց սերն ու նվիրումն առ հայրենիք:

Ինչպես նշեցին ընկերները՝ «առհասարակ օրերն իրարից չեն տարբերվում, տարբերվում են մարդիկ, որոնք օրերը դարձնում են առանձնահատուկ»: Վո-

լոդյան իրենով առանձնահատուկ էր դարձնում վարժարանի ու իր դասընկերների ամեն օրը:

Վոլոդյան ծառայում էր Գորիսի զորամասերից մեկում, 2022-ի սեպտեմբերին հերոսի մահով զոհվեց Իշխանասարի մարտերում:

Դասընկերները, արցունքներն աչքերին, վստահեցնում էին, որ չեն մոռանա իրենց ընկերոջը՝ լուսավոր ու ժպտադեմ Վլեին, որովհետև «նա հայրենիքի զավակ է, իսկ հայրենիքի զավակի մասին պետք է միշտ խոսել», ցավով բարձրաձայնում՝ դու կաս, մենք չենք պատրաստվում համակերպվել քո չլինելու փաստի հետ…

Մեր հայոց բանակ, մեր արժանապատվություն՝ հնչում էր աշակերտների շուրթերից՝ հպարտությունն ու տխրությունը միահյուսելով իրար:

«Հայրենիքին կյանքը տալը չափազանց մեծ զոհողություն է, չափազանց մեծ հայրենասիրություն»,-ասում է ռազմագիտության ուսուցիչը՝ շնորհավորելով հայոց բանակի տարեդարձը, բանակ, որ մեր հույսն է ու ապավենը:

ՀՊՄՀ պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, ով մի ամբողջ կյանք նվիրվել է համալսարանական ավագ դպրոց-վարժարանին, չի կարողանում թաքցնել հուզմունքը: Ասում է՝ Վոլոդյան դպրոցի պատերի ներսում իր ժպիտը թողեց, նրան միշտ հիշելու եմ ժպիտը դեմքին:

«Չհասցրինք ճանաչել նրան՝ գնաց միանալու անմահներին-ասում է Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը: -Մեզնից յուրաքանչյուրն ունի սկիզբ ու վերջ, բայց երբ հրաժեշտ ենք տալիս հերոսներին՝ մենք հրաժեշտ ենք տալիս հավերժությանը: Վոլոդյան չհասցրեց իր նախընտրած մասնագիտության մեջ գտնել ճշմարտությունը. հիմա նա իր բաժին ճշմարտությունն է փնտրում երկնքում…»:

Ծանր էր տեսնել նահատակված երիտասարդի ծնողների արցունքները, զգալ նրանց կորստի ցավը և սփոփելու բառեր գտնել…

Միջոցառման ողջ ընթացքն ուղեկցում էր Արամ mp3-ի՝ սիրտ կեղեքող երգը.

«Մեր լուսավոր տղա,
Ուր ես, ասա, հիմա…»:

Իսկ էկրանից ձեռքով էր անում ժպտացող տղան՝ հավերժ երիտասարդ ու լուսավոր…

Թող որ այսուհետև պատերազմը մնա հիշատակի պատերին, գրքերում ու հիշողություններում, երանի այսուհետ խաղաղությունը թևածի հայոց հինավուրց հողի վրա, բայց ոչ նոր կորուստների գնով:

Շնորհավոր 31-րդ տարեդարձդ, հայկական բանակ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ես հպարտ եմ, որ ավարտել եմ Մանկավարժականը

➢2

- Ես շատ հպարտ էի դրա համար: Ինձ մոտ այնպիսի զգացողություն էր, թե ես ոչինչ չեմ անում և արժանի չեմ նման պարգևի: Բայց գործընկերներս ավելի ճիշտ մոտեցում ցուցաբերեցին: Ես կարծում եմ՝ եթե պատահական չես հասել ինչ-որ բանի, դա շատ նորմալ զգացողություն է՝ դու ինչ ես արել…Ես աշխատում եմ գլուխս կախ, զբաղվում իմ առօրյա գործով:

- Ովքե՞ր են եղել Ձեր դասախոսները, որոնց ուսանողն այսպիսի հաջողությունների է հասել:

- Իմ դասախոսներն իսկական երախտավորներ էին՝ Վյաչեսլավ Աղաբաբյանը (բուսաբանություն), Մարտին Համբարյանը (կենդանաբանություն), Սպանդար Մովսիսյանը, որ դասավանդում էր մանկավարժություն, Ֆրունզիկ Ալեքսանյանը դասավանդում էր քիմիա, բախտ եմ ունեցել լինելու Վովա Բաբայանի ուսանողը…Նրանք շատ մեծ գիտնականներ էին: Հանրապետության լավագույն մասնագետներն ու գիտնականներն աշխատում էին Մանկավարժականում: Եվ ես հպարտ եմ դրա համար, որ ուրիշ բուհ չընտրեցի, նախընտրեցի Մանկավաժականը:

Շնորհակալություն եմ հայտնում իմ աշխատանքային կոլեկտիվին, բոլոր գործընկերներիս, որ գնահատեցին տարիների իմ վաստակը և ռեկտորատին ներկայացրին: Հատուկ շնորհակալություն բուհի ռեկտորին և ռեկտորատին՝ կրթության ոլորտում իմ համեստ ծառայությունը «Խաչատուր Աբովյան» մեդալով և ԿԳՄՍ նախարարության պատվոգրով գնահատելու համար:

- Որքան տեղյակ եմ՝ Ձեր ասպիրանտները հաջողությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանում…Գիտնականների պատրաստման գործում մեծ ներդրում ունեք:

- Իմ արցախցի ուսանողը 2020 թվականի նոյեմբերին Երևանում հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական՝ «Արցախի ականաճանճերը» թեմայով, իսկ մյուս՝ Գյուղակադեմիայում սովորող ասպիրանտասյաս տարվա գարնանը կպաշտպանի «Երևանի բուրումնավետ բույսերի վնասատուները և պայքարի միջոցները» թեմայով ատենախոսությունը:

- Ուրիշ ի՞նչ կուզեիք ասել:

- Համալսարանի ղեկավարությունը մեզ լայն աշխատանքի հնարավորություն է ընձեռել. մենք արդեն չորրորդ տարին է՝ ունենք էկոլոգիական գիտական լաբորատորիա՝ էկոլոգիական մոնիտորիգի և գնահատման լաբորատորիա: Մենք 3 տարի հետազոտեցինք Ալավերդի քաղաքի տարածաշրջանի էկոլոգիական վիճակը. հետազոտում էինք ծանր մետաղների միգրացիոն ընդունակությունները *հող*, *բույս*, *կենդանի* համակարգում: Իսկ այժմ ուսումնասիրում ենք Հրազդանի շրջանի ցեմենտի գործարանի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Ամբիոնի գիտական կոլեկտիվն ակտիվորեն աշխատում է, հոդվածներ տպագրում վարկանիշային պարբերականներում: Համագործակցում ենք Կենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի հետ, համատեղ հետազոտություններ ենք անում: Հավելեմ՝ հայտնաբերել ենք մանրէներ, որոնք շատ հեռանկարային են: Պատրաստվում ենք հետագայում խորացնել մեր հետազոտությունները:

Զրույցը՝
Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Պրակտիկան ուսումնական գործընթացի կարևոր մասն է

«Մանկավարժական համալսարանի ուսանողների պրակտիկան կազմակերպվում է բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշչի և պրակտիկայի կանոնակարգի համաձայն: Այն կրթական ծրագրի ու գործընթացի մասն է և կրում է շարունակական բնույթ ողջ ուսումնական տարվա ընթացքում»,-ասում է ՀՊՄՀ Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Հասմիկ Առաքելյանը, ով կարևորում է ուսանողների պրակտիկ գործունեությունը թե՛ բակալավրի, թե՛ մագիստրատուրայի կրթական ծրագրով ուսումնառության ընթացքում:

Անտարակույս, պրակտիկայի ընթացքում բացահայտվում են ուսանողների մասնագիտական և կազմակերպչական հմտությունները, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, հետազոտական աշխատանքի համար ուսումնական նյութերի ձեռքբերման ու դրանց ճիշտ կիրառման կարողությունները: Այդ ամենն ուսանողներն ամփոփում են իրենց թղթապանակներում, որոնցում ներկայացնում են իրենց պրակտիկ աշխատանքների վերլուծությունը:

Ուսանողների պրակտիկան անմիջականորեն ղեկավարում են մեթոդիստները, մանկավարժներն ու հոգեբանները:

Հասմիկ Առաքելյանը հավելում է, որ ուսումնաճանաչողական երկշաբաթյա պասիվ պրակտիկան նախընտրելի է դարձնել մեկշաբաթյա, իսկ այդ ժամանակահատվածը հատկացնել ակտիվ պրակտիկային:

Պրակտիկ աշխատանքների կազմակերպման ընթացքում լինում են նաև բացթողումներ, երբ մեթոդիստը կամ մյուս մասնագետները պարբերաբար չեն հաճախում դպրոց: Պրակտիկայի կենտրոնի ղեկավարն իր գոհունակությունն է արտահայտում պրակտիկան ղեկավարող մանկավարժների աշխատանքի մասին:

Ուսանողների պրակտիկան կազմակերպվում է հանրակրթական դպրոցներում, թանգարաններում, նախադպրոցական հաստատություններում, հեռուստաընկերություններում, հոգեբանական կենտրոններում, մշակույթի տարբեր օջախներում:

«Պրակտիկայի կազմակերպման կենտրոնի հետ հաջողությամբ գործակցում են դ. 135, Սմբատ Բյուրատի անվան դ 125, Չարենցի անվան դ 67, Խ. Աբովյանի անվան դ 2, Արմեն Հովհաննիսյանի անվան դ 194, համալսարանական հիմնական և ավագ դպրոցները և մի շարք այլ հաստատություններ»,-ասում է Հասմիկ Առաքելյանը՝ նաև ընդգծելով, որ պրակտիկայի կազմակերպման գործում իրենց լավագույն փորձն ու ներդրումն ունեն Արմինե Եփրիկյանը, Արմինե Միքայելյանը, Գայանե Հարությունյանը, Մելքոն Ավետիսյանը, Կարեն Հայրյանը, Լուսինե Գալստյանը, Աստղիկ Գևորգյանը և մի շարք այլ դասախոսներ:

ՀՊՄՀ բակալավրի կրթական ծրագրերով իրականացվում է մասնագիտական երկու տեսակի պրակտիկա՝ ուսումնական և մանկավարժական: Ի տարբերություն ուսումնական պրակտիկայի, որն անցկացվում է ոչ մանկավարժական կրթօջախներում, Մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է կրթական հաստատություններում և նպատակ ունի զարգացնել ուսանողների մանկավարժական պրակտիկ կարողությունները:

Մագիստրոսի կրթական ծրագրով ուսանողներն ունենում են մասնագիտական երկու՝ հետազոտական և մանկավարժահետազոտական պրակտիկա:

Առկա համակարգում սովորողների ուսումնաճանաչողական պրակտիկան սկսվում է 2-րդ կուրսի երկրորդ կիսամյակից և տևում է 6 կիսամյակ, իսկ հեռակա համակարգում սովորողների պրակտիկան՝ 3-րդ կուրսի երկրորդ կիսամյակից, տևում է 4 շաբաթ: Պրակտիկաները շարունակական են մինչև ավարտական կուրսի առաջին կիսամյակը: Պրակտիկայի շրջափուլի ավարտին ուսանողները պաշտպանում են իրենց պրակտիկայի արդյունքները, որը կազմում է նրանց ամփոփիչ ատեստավորման գնահատականի 20 տոկոսը:

«Ուսանողները մեծ ոգևորությամբ են կիսում մեզ հետ իրենց պրակտիկայի արդյունքները, պրակտիկ աշխատանքը փորձ և փորձառություն է տալիս նրանց»,-ասում է Հ. Առաքելյանը:

Ինչպես տեղեկացանք, հեռավոր և սահմանամերձ տարածաշրջանների ուսանողները պրակտիկան անց են կացնում իրենց մարզերում՝ հաղթահարելով հեռավորությունն ու սոցիալական պայմանները:

Քննարկում սոցիալական մանկավարժների հետ

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողներ Գոհար Դարբինյանի, Հասմիկ Դանիելյանի և Հասմիկ Ստեփանյանի հետ քննարկեցինք իրենց մասնագիտությանը վերաբերող հարցեր:

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ուսանողուհի **Գոհար Դարբինյանը** Տավուշի մարզի Վերին Կարմիրաղբյուր գյուղից է:

Մանկավարժական համալսարանն ընտրել է, որովհետև առաջատար այս բուհն է, որ մանկավարժական կադրեր է պատրաստում, մասնագիտությունն էլ հետաքրքրել է: Հեռակա համակարգն էլ ընտրել է սոցիալական պայմաններից և տարածքային հեռավորությունից ելնելով. «Շատ ուրախացա, երբ իմացա, որ հեռակա ուսուցման համակարգում կարող եմ սովորել և ստանալ սոցիալական մանկավարժի մասնագիտություն, որովհետև շատ դժվար կլիներ հաղթահարել բոլոր այն խնդիրները, որոնց կհանդիպեի առկա ուսուցման համակարգն ընտրելու դեպքում: Կուրսի ուսանողների մեծ մասը սոցիալական խնդիրները լուծելու պատճառով է դիմել հեռակա ուսուցման համակարգ, մի մասն էլ աշխատանքի հետ համատեղում է ուսումը»:

Գոհարը կարծում է, որ հեռակա ուսուցման համակարգում սովորելը հիմնականում ուսանողից է կախված, որովհետև այստեղ մեծ է նաև ինքնակրթության դերը: Բնականաբար մեծ դեր ունի նաև դասախոսական կազմի հետ տարին երկու անգամ մեկական ամսով հանդիպելը, դասերի ընթացքը:

Գոհար Դարբինյանի կարծիքով հեռական ուսուցման համակարգն ունի իր դրական ու բացասական կողմերը. մի կողմից այն աշխատելու հնարավորություն է տալիս, տարածքային հեռավորության խնդիրն է լուծվում և մի շարք սոցիալական խնդիրներից զերծ պահում: Սակայն առկա համակարգում ամենօրյա դասագործանքացին մասնակցելն առավել նախընտրելի է՝ ➢5

Պրակտիկա

Քննարկում սոցիալական մանկավարժների հետ

➢4 գիտելիքների և հմտությունների ձեռքբերման տեսանկյունից: Հեռակա համակարգի երկամսյա ուսուցման ընթացքում խտացված մատուցվում է այն ամենն, ինչ պետք էր անցնել մեկ ուսումնական տարվա ընթացքում: Այս տեսանկյունից համեմատելի չեն առկա և հեռակա ուսուցման համակարգերը:

Կուրսում 7 աղջիկներ են սոցիալական մանկավարժի մասնագիտություն ստանում: Բոլորն էլ սովորող են, դասախոսների տված գրականության ցանկերը լավ ուսումնասիրում են, կարդում, յուրացնում, առանց որի դժվար է որևէ արդյունքի հասնել:

Աղջիկները գոհ են մեր համալսարանի զեղչային համակարգից, ասում են համեմատել են այլ բուհերի զեղչային համակարգերի հետ, համոզվել, որ մեզ մոտ այն ավելի լավ է գործում: Սահմանամերձ բնակավայրից եկած ուսանողի վարձավճարն էլ ավելի շատ է զեղչվում բարձր մօգ-ի դեպքում:

Ուսանողների հետ խոսեցինք նաև առարկաների մասին: Ցածր կուրսերում նրանց թվում էր, թե այս կամ այն առարկան իզուր են անցնում, բայց բարձր կուրսերում արդեն հասկացա՝ ինչի համար են ուսուցանվել այդ առարկաները:

Հասմիկ Նալբանդյանը Արտաշատ քաղաքից է: Ավարտել է տնտեսագիտական քոլեջ, սակայն երեխաների հետ աշխատելու ցանկությունը նրան բերել է Մանկավարժական համալսարան. ընտրել է սոցիալական մանկավարժի մասնագիտություն, որպեսզի աշխատի այդ մասնագիտությամբ:

Հասմիկ Ստեփանյանն էլ Սիսիանի Հացավան գյուղից է: Նա ընդունվել է առկա ուսուցման համակարգ, մեկ տարի սովորել անվճար և պահպանել անվճարի կարգավիճակը՝ փոխադրվելով 2-րդ կուրս, սակայն հեռավորության ու սոցիալական խնդիրների պատճառով տեղափոխվել է հեռակա ուսուցման համակարգ: Հասմիկի համար առկա ուսուցման մեկ տարին լավ հիմք է եղել, որպեսզի հեռակայում կարողանա շարունակել առանց դժվարությունների:

«Ճիշտ է, հեռական բավականին տարբերվում է առկա ուսուցումից, բայց դասախոսների շնորհիվ կարողացել եմ հաջողությունների հասնել: Մեր ձեռք բերած կարողությունների ու հմտությունների վրա հենվելով՝ կարողանում ենք միաժամանակ ինքնակրթվել, ավելացնել ստացած գիտելիքները»,-ասում է Հասմիկը:

Մի կողմից դասախոսների ջանադիր նվիրումն է օգնում հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին, մյուս կողմից իրենց ակտիվությունը, պրպտելու, ինքնակրթությամբ առաջ գնալու կամքը:

Աղջիկները գոհ են համալսարանական կրթությունից, իրենց ակնկալիքներն արդարացված են:

Գոհար Դարբինյանը խոսեց ներկա իրավիճակում մեր երկրի համար կրթության դերի և կարևորության, ինչպես նաև Մանկավարժական համալսարանի ռազմավարական նշանակության մասին՝ փաստելով, որ դպրոցում բոլոր երեխաների գիտակցական մակարդակի հիմքը դրվում է այս համալսարանի պատրաստած կադրերով, և որքան այդ հիմքը կայուն լինի, այնքան սերունդների հետ խնդիր չենք ունենա: Վերջինս հավելեց, որ Մանկավարժական համալսարանի գործունեությունը տեսանելի է ուսուցիչների աշխատանքում:

Ուսանողներն այդ տեսանկյունից կարևորեցին համալսարանի առաքելությունը և սիրելի բուհին մաղթեցին առաջընթաց ու զարգացում:

«Մանկավարժը պետք է լինի երեխայասեր, երեխայակենտրոն. դա շատ կարևոր է. իսկ բուհին մաղթում եմ բարգավաճում, որպեսզի կարողանա կրթել որակյալ սերունդներ»,-ասաց Հասմիկ Նալբանդյանը:

Վերջինս կարևորեց համընդհանուր ներառականության պայմաններում սոցիալական մանկավարժի դերը դպրոցում և ցավով նկատեց, որ սոցիալական մանկավարժները դպրոցներում աշխատում են որպես ուսուցչի օգնականներ:

Հասմիկ Ստեփանյանն էլ կիսեց կուրսընկերուհու մտահոգությունը, թե ինչու դպրոցներում կարևորված չէ սոցիալական մանկավարժի մասնագիտությունը, եթե Մանկավարժական համալսարանը պատրաստում է այդ մասնագիտությամբ կադրեր.«Պետք է պետության ներսում կարգավորվի այդ խնդիրը և սոցիալական մանկավարժին հնարավորություն տրվի դրսևորվել իր մասնագիտության շրջանակներում»:

Ընդհանուր առմամբ ուսանողների դիտարկումները տեղին էին. պետք է կարևորել սոցիալական մանկավարժի առաքելությունը սոցիալական խմբերի փոխհարաբերությունների համակարգման, խնդիրների վերհանման և դրանց լուծման գործում: Այլ խոսքով՝ սոցիալական մանկավարժին աշխատելու ասպարեզ և հնարավորություն ընձեռել:

Դպրոցը պետք է ունենա բազմամասնագիտական թիմ

«Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռակա 5-րդ կուրսի 7 ուսանողներ մանկավարժական պրակտիկան անց են կացրել №104 դպրոցում: Հունվարի 31-ին նրանք հաջողությամբ մասնակցել են պրակտիկայի պաշտպանությանը»,-ասում է հոգեբանության պրակտիկայի մեթոդիստ, Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի դոցենտ Լուսիկ Քուրքջյանը:

Ուսանողների պրակտիկայի ընթացքը լավագույնս իրականացվել է պրակտիկայի ղեկավար Լիդա Արամյանի գլխավորությամբ, ամբիոնի դոցենտ, պրակտիկայի մեթոդիստ Լուսիկ Քուրքջյանի ղեկավարությամբ, №104 դպրոցի դպրոցի ներկայացուցիչ, հոգեբան Ազնիվ Մանուկյանի աջակցությամբ:

Լուսիկ Քուրքջյանը սոցիալական մանկավարժների համար վարում է տարիքային և մանկավարժական հոգեբանություն: Սոցմանկավարժները «Տարիքային հոգեբանություն» առարկան 3 կիսամյակ են անցնում, որի ընթացքում ծանոթանում են ախտորոշման մեթոդներին ու մեթոդիկաներին:

Դոցենտ Քուրքջյանն առանձնակի ընդգծում է, որ հեռակայի վերոհիշյալ կուրսի ուսանողները հրաշալի պատրաստակամությամբ ձգտում են ստանալ ոչ միայն տեսական, այլև պրակտիկ գիտելիքներ: Հոգեբան Ազնիվ Մանուկյանը ուսանողներին սովորեցրել է ինչպես աշխատել նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետ, ինչի արդյունքում ուսանողները մասնակցեցին Կարիքների գնահատման կենտրոնի աշխատանքին:

Հոգեբանը ներկայացնում է՝ շատ հագեցած էր ուսանողների պրակտիկան, իսկ պաշտպանությանը նրանք կարողացան ներկայացնել այն ամենն, ինչ արել էին դպրոցում: Պրակտիկան ուսանողներին փորձառություն տվեց, և նրանք պատրաստ են դպրոցներում իրականացնել սոցիալական մանկավարժի գործառույթները:

Ուսանողուհի Հասմիկ Ստեփանյանը պրակտիկան հաջողված է համարում, կարողացել է համալսարանում ստացած գիտելիքները պրակտիկայում կիրառել, փորձ ձեռք բերել, տեսականը գիտելիքները կապել պրակտիկայի հետ մեթոդիստի և հոգեբանի աջակցությամբ:

«Պրակտիկայի դասալսումների ընթացքում եղել են մանկավարժական հոգեբանական իրավիճակներ, որոնց կարողացել ենք լուծումներ տալ մեր հնարավորությունների սահմաններում»,-ասում է Հասմիկը:

Սոցիալական մանկավարժ Գոհար Դարբինյանն անդրադարձավ պրակտիկայի անցկացման դրական ու բացասական կողմերին. «Բնականաբար դրականը շատ էր. մենք կարողացանք մեր գիտելիքները գործնականում կիրառել և հետագայում էլ որպես մասնագետ մենք այդ փորձը ունենում ենք: Հնարավորություն ունեցանք մոտիկից ծանոթանալ սոցմանկավարժի գործառույթներին, դպրոցի համագործակցությանը: Բացասական կողմերից կնշեմ, որ դպրոցներում չկա սոցիալական մանկավարժի հաստիք, և եթե չլիներ հոգեբան Ազնիվ Մանուկյանը, ով տիրապետում էր այդ գործառույթներին, ոչ մեկը չէր կարող դա մեզ սովորեցնել»:

Մարիամ Սարգսյանը ևս խոսեց դպրոցներում սոցիալական մանկավարժի հաստիքի բացակայության մասին. «Սոցիալական մանկավարժը պետք է լինի դպրոցու այդ բացը, միևնույն է, սոցիալական մանկավարժի գործը պետք է հենց ինքը՝ սոցիալական մանկավարժը անի»: Վերջինս մատնանշում է սոցմանկավարժի գործառույթները՝ թղթաբանություն, ԿՏՊԿՈՒ երեխաների սոցիալ-կենցաղային հմտությունների ձևավորումն ապահովելը, ուսուցիչ-աշակերտ-ծնող եռակողմ կապի իրականացում, որպեսզի արդյունքն ավելի տեսանելի լինի: Հոգեբանն աշխատում է հոգեբանական, իսկ սոցիալական մանկավարժը՝ բուն սոցիալական ուղղություններով:

Ուսանողուհի Արմինե Բարսեղյանը պրակտիկայի ընթացքում այնպիսի փորձ է ձեռք բերել, որ ամբողջությամբ պատկերացնում է ոչ միայն սոցիալական մանկավարժի, այլև թիմային աշխատանքի առանձնահատկությունները և մեծ ցանկություն ունի այդ թիմային աշխատանքի մաս դառնալ:

№ 104 դպրոցի հոգեբան Ազնիվ Մանուկյանը նկատում է՝ դպրոցներում սոցիալական մանկավարժի հաստիքները վերացվեցին քաղաքում չորս տարածքային կենտրոնների ստեղծման հետ կապված: Մասնագիտական տարածքային կենտրոններում կան սոցիալական մանկավարժներ, բայց կենտրոնների մասնագետները դպրոցների սոցիալական մանկավարժներին չեն կարող փոխարինել: Սոցիալական մանկավարժը, իմ կարծիքով, պետք է լինի դպրոցում յուրաքանչյուր աշակերտի կողքին:

Դպրոցները չունեն նաև հատուկ մանկավարժներ և լոգոպեդներ: Դպրոցներից նրանց հրավիրում են, բայց վերջիններս աշխատում են1-2 ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ:

Տարածքային կենտրոնները օգնող կառույցներ են, այնուամենայնիվ, դպրոցը պետք է ունենա մասնագիտական թիմ, որում պետք է ներառվեն լոգոպեդը, հոգեբանը, հատուկ մանկավարժը և սոցիալական մանկավարժը:

«Պրակտիկայի պաշտպանությունը ցույց տվեց, որ մեր ուսանողները լավ էին մասնակցել պրակտիկային, լավագույնս պատրաստվել էին պաշտպանությանը և, կարելի է ասել, նրանց բախտը բերել է, որ ողջ ընթացքում իրենց կողքին է եղել լավագույն հոգեբան Ազնիվ Մանուկյանը, ով զարգացրեց ուսանողների պրակտիկ կարողությունները»,-ամփոփեց պրակտիկայի մեթոդիստ Լուսիկ Քուրքջյանը՝ հավելելով՝ այն, ինչ պրակտիկայի ընթացքում ստացան ուսանողները, իրենց հետագա աշխատանքի ընթացքում միշտ կհիշեն այդ փորձը:

Զրուցեց Սիլվա ԱՍՐՅԱՆԸ

ՀՊՄՀ ԱՆՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ. ԼԵՎՈՆ ՋԱՎԱԽՅԱՆ

ԳՐԵԼ ԱՃՏԻ ՄԱՍԻՆ՝ ԱՃՏԻ ԼԵԶՎՈՎ

Պատմաբան, գրող Լևոն Ջավախյանը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական համալսարանի շրջանավարտ է: Նրա կենսապատումի հետաքրքիր էջերը փորձեցի գաղտնազերծել, որպեսզի ընթերցողներն ավելի լավ ճանաչեն թերևս վաղուց արդեն էլ ճանաչման կարիք չունեցող նրա տեսակը:

Լևոն Ջավախյանը հրատարակել է 7 գիրք՝ «Ամենաանկեղծ մարդը» (1990), «Ղարաբաղից մինչև պեչենու բաղերը» (1999), «Հիսունհինգ», (2005), «Արծաթագիր» (2010), «Վերնիսաժ» (2015), «Ծնկան ծերին» (2018), «Ետ արի» (2022):

2017-ին ՀՀ նախագահի կողմից արժանացել է «Մովսես Խորենացի» մեդալի, իսկ 2018-ին՝ բարձրագույն պարգևի:

Ապրում է կաղապարներից զերծ՝ ամեն անգամ յուրովի ներկայանալով իր ներաշխարհի անկեղծ ու սուր բացահայտումներով: Լևոն Ջավախյանի համար Վերնիսաժը ապրելու և իր յուրահատուկ կոլորիտով լցնելու մի վայր է, հետաքրքիր ու անսպասելի հանդիպումների խաչմերուկ՝ գրականասերների ու ընդհանրապես մտավորականների հետ:

Ինքս էլ փորձել եմ հարցազրույցի մեջ պահպանել գրողի կոլորիտն ու լեզվամտածողությունը:

- Պարոն Ջավախյան, ե՞րբ եք ավարտել Մանկավարժականը և ինչ հետաքրքիր հուշեր ունեք բուհի հետ կապված:

- 1969 թվականին ընդունվել և 1973 թվականին ավարտել եմ Մանկավարժական ինստիտուտը: Այն տարիներին մեծ մրցույթ էր լինում, և 25 դիմորդից 1-ն էր ընդունվում: 16 անգամ քննություն եմ հանձնել մեկ անգամ ընդունվելու համար:

Երբ ընդունվեցի Պատմության ֆակուլտետ, դեկանն Արտաշես Պողոսյանն էր: Նա մեզ ասում էր՝ ձեր բախտը բերել է դասախոսների հարցում: Մեզ դասավանդում էին Ջավեն Տիգրանիչը, Լևոն Շահինյանը, Սուրեն Հակոբյանը, Թելունցը, Բայբուրդյանը, ակադեմիկոս Աղայանը, ռեկտոր Փարեմուզյան Աշոտը… ընտիր դասախոսներ էին:

Իմ դասախոսներից էր նաև իմ համագյուղացի Վարշամ Ավետյանը, ում հետ հայրենի Շնող գյուղում ուսանական պեղումների մասնակցեցի: Դա բրոնզեդարյան հուշարձան էր: Ամենահիշարժանն այն է, որ իմ առաջին գրավոր խոսքը՝ «Շնողի դամբարան» վերնագրով, տպագրվեց ինստիտուտում լույս տեսած ուսանողական գիտական ժողովածուի մեջ, եթե չեմ սխալվում, 1973 թվականին:

- Որտեղի՞ց սկսեցիք Ձեր աշխատանքային ուղին և ո՞ւր հասաք…

- Ամենասկզբում հասարակ բանվոր եմ աշխատել Ալավերդու Տեքստիլ ֆաբրիկայում, հետո Լեռնամետալուրգիական կոմբինատում: Ինստիտուտն ավարտելուց հետո ուսուցչություն եմ արել Ալավերդու № 2 միջնակարգ դպրոցում: Այնուհետև աշխատել եմ Երևանի Լենինյան շրջանի գործկոմում: Ավելի քան 10 տարի աշխատել եմ այն ժամանակվա ՀԽՍՀ Լուսավորության մինիստրությունում՝ տեսուչ, բաժնի վարիչ և այլն:

- 90-ականների վատ տարիներին լրագրողական աշխատանքի անցաք…

- Այո, սկսեցի գրել տարբեր թերթերում, որոնցից օրը մեկը բացվում էր, մյուսը փակվում…

Աշխատել եմ խմբագրի տեղակալ, խմբագիր…

90-ականներին կյանքը գնալով վատանում էր, իսկ ես մտածում էի՝ ամեն գործ կանեմ, բացի առևտրից… Բայց այնպես ստացվեց, որ ես հայտնվեցի Վերնիսաժում: Եվ փառք Աստծո, կարողացա գոյատևել…

- Ինչպե՞ս եղավ, որ մասնագիտությամբ պատմաբան Լևոն Ջավախյանը պատմաբանությունը զիջեց գրականությանը:

- Դա եկավ Հրանտ Մաթևոսյանի «Ծառեր»-ից: Երբ կարդացի Հրանտ Մաթևոսյանի «Ծառերը», ոնց որ մեկն ինձ ասի՝ դու էլ կարող ես գրել…(երբ մի լավ գրականություն ես կարդում՝ դու էլ ես ուզում, չէ՞, դրա մեջ մտնել…): Այդ ժամանակ աշխատում էի գործկոմում: Թող ներվի ասել՝ բոլորը զարտուղի փող էին աշխատում, իսկ իմ սեղանը ոնց որ ավլած կալ, պարապությունից չգիտեի՝ ինչ անել… և սկսեցի գրել: Առաջինը ,Շնողե ակնարկն էր…

- Քանի՞ գիրք եք տպագրել մինչև այսօր, և ո՞րն է Ձեր առնելիք-տալիքը գրականության մեջ…

- 7 գիրք եմ գրել: Իսկ ասելիքը ո՞րն է…ինչի՞ եմ գրում…Մի գրած վիպակ ունեմ, որը վերնագրել եմ՝ «Ուզում եմ ասեմ՝ աշխարհն իմանա»… Երբ մի լավ բան ես տեսնում, ուզում ես կիսվել ընկերոջդ հետ, հարազատիդ հետ…Երբ ուզում ես ավելի մեծ մասշտաբով կիսվել՝ արդեն էդ ուրախությունդ, էդ անսովորն ու արտասովորն ուզում ես փոխանցել ժողովրդիդ: Այս առումով վերնագիրը խիստ խորհրդանշական ա, իմաստը՝ փիլիսոփայական…

- Վերնիսաժը օգնե՞ց, թե՞ խանգարեց Ձեր գրականությանը: Ես կարծում եմ՝ օգնեց:

- Շա՜տ օգնեց, շա՜տ: Վերնիսաժն ինձ բացի, սննդից, փողից, ապրելակերպից, տվեց ազատություն: Ինձ մոտ ավելի շատ մտավորականներ, գրողներ են գալիս, քան գրողների միություն: Էդ առումով ես կենտրոն եմ: Բացի էդ ազատությունը, որ ինձ ընծայվեց, նաև մարդաճանաչողությունը, մարդկանց հետ հարաբերվելն ինձ շատ օգնեցին: Ես ինչ-որ տեղ կարծես աշխարհի կենտրոնում լինեմ. Աշխարհը երկու ձևով կարող ես տեսնել. մեկը, որ տոմս ես առնում ու շրջագայում, պտտվում, մեկ էլ, որ մի տեղ նստում ես, ու աշխարհն ա քո շուրջը պտտվում…Վերնիսաժն էն տեղն ա, որ ոնց որ աշխարհի առանցքն ըլնի՝ տարբեր երկրներից տարբեր մարդիկ անընդհատ պտտվում են, ու սենց էլ պակաս աշխարհ չես տեսնում…

- Ձեր ծննդավայր Շնող գյուղն այնքան գեղեցիկ եք պատկերել, որ այն կարելի է ճանաչել առանց գյուղ այցելելու…

- Ես ծնվել ու մեծացել եմ Ալավերդի քաղաքում, բայց այն *շրլամա* քաղաք էր՝ տարբեր գյուղերից հավաքված մարդկանցով, պրոլետարական…Ես միշտ ավելի շատ ուզեցել եմ զգալ Շնողը… Որքան դեպի ակունքն ես գնում, այնքան ջրերը պարզ են ու զուլալ: Դրա համար իմ գրականության մեջ ավելի շատ Շնողն ա, քան Ալավերդին:

- Ո՞րն է մեր օրերի գրողի առաքելությունն ու հավատամքը: Արդյո՞ք բոլորն են հասկանում՝ ինչ ասել է գրողի առաքելություն…

- Ես իմ օրինակով կասեմ. ես ձեռս դրել եմ խղճիս ու ասել՝ ճիշտ գրել ճշտի մասին, երբեք չստել: Գրողները երբեմն գրելիս հերոսների անունները փոխում են…Գրականությունն ինչ-որ տեղ կապ ունի ստի հետ: Ես որոշեցի էդ տեսակ ստի հետ կապ չունենալ: Գրել ճշտի մասին, ճշտի լեզվով:

Իսկ հիմնականում չեմ մտածում, թե մե՞ծ առաքելություն ունեմ մարդկության առջև: Ես ինչ-որ տեղ հոգևոր ուրախություն եմ զգում ստեղծագործելիս և ուզում եմ էդ ուրախությունը վերադարձնեմ ընթերցողին, մարդկանց:

Հիմա պետություն ու պետականություն ունենք, առաջ չունեինք, և էն ժամանակվա դասական գրողներն ավելի մեծ առաքելություն ունեին՝ պետության դեր էին տանում:

Հիմա պետություն ունենք, թող զբաղվենք. իմը էդ հոգևոր ուրախությունը տալու մեջ է…

- Որո՞նք են Լևոն Ջավախյանի ուժեղ ու թույլ կողմերը:

- Մամուլի մի ակումբում հարցազրույց էի տալիս, հարցրին՝ քո թերությունը ո՞րն է, ասացի՝ բերանբացությունը: Դրա մեջ և՛ իմ թույլ, և՛ ուժեղ կողմն ա: Որովհետև բաց ճակատով աշխարհի առաջ կանգնում եմ ու ասում եմ էն, ինչ մտածում եմ: Ես կյանքը նման ա խաղի, թղթախաղի: Երբ մարդիկ խաղում են, ու քարտերը փակած ա… Ես էդ խաղի մեջ եմ, բաց քարտերս բաց են, ես չեմ փակում: Ասեմ, որ այդ բաց խաղաթղթերով խաղում եմ և հաղթում :

- Ե՞րբ է մարդն իրեն գնահատված զգում իր երկրում, Դուք Ձեզ գնահատվա՞ծ մարդ եք համարում:

- Օր չկա, որ այստեղ կամ տուն գնալիս անծանոթ մարդիկ ինձ չբարևեն: Անցած ամառ մի ընտանիք էր եկել, Վերնիսաժում հեռվից ինձ էին նայում: Հարցրի՝ ի՞նչ է եղել: Ասեցին եկել ենք տեսնենք՝ ով է էն մարդը, որ գրել է «Ջավակի մահը»: Բա դա գնահատա՞նք չի…Դա արդեն մեծ գնահատանք ա: Էդ առումով ես գնահատված մարդ եմ…

- Ուրիշ ինչի մասին կուզեիք խոսել…

- Սիլվա ջան, ինչի՞ մասին խոսամ՝ տխրությա՞ն, որ շատ խոսամ՝ էդ տխրությունը կվերածվի ա լացի: Ավելի լավ ա չլացենք, սպասենք, 2023-ին գուցե հույսի մի դուռ կբացվի…

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԱՐՑԱԽԱ ԾՈՒԽ

Ահա՛ Արցախն է, ահա և մենք , որ եկել ենք դարերի խորքից և այսօր աշխարհին ենք ներկայացնում Արցախը, որ դեռ ապրում է: Զգո՞ւյշ անցիր այստեղով: Այստեղ է ինքը՝ ժամանակը, այստեղ է ինքը՝ հավիտենությունը:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի՝ պատմության բաժնի 4-րդ կուրսի ուսանողները, պրակտիկայի շրջանակներում իրականացրին «Արցախա ծուխ» բաց դաս-միջոցառումը: Միջոցառման վերնագիրը պատահական ընտրված չէր. պատերազմների թոհն ու բոհը, արկերի պայթյունն ու ծուխը ուղեկցում է Արցախին ու կարծես նրա ճակատագրի մի մասն է դարձել, սակայն Արցախը շարունակում է ծխալ, արարել ու ապրել հանուն վաղվա ապագայի, նրա հույսը լուռ է և ամուր:

10-րդ դասարանի պատմահասարակագիտական հոսքի աշակերտները ներկայացրին Արցախի երեք պատերազմները՝ փորձելով մեկնաբանել, վերծանել ու հասկանալ պատերազմների պարտության և հաղթանակի պատճառները:

Մեր հայրենիքի անբաժանելի մասն է կազմում հայկական երկրորդ հանրապետությունը՝ Արցախը, և դա անքննելի փաստ է: Տարբեր ժամանակաշրջաններում այն կոչվել է տարբեր անուններով՝ Ուրտեխե-Ուրտեխինի, Օրխիստենե, Արցախ, Ծավդեք, Խաչեն, ինչպես նաև Ղարաբաղ՝ Սև այգի: Որքան էլ հարևան պետությունները փորձեն խեղաթյուրել պատմությունն ու պատմական Արցախը իրենցը համարել, պատմությունն այլ բան է վկայում:

Դեռևս մ.թ.ա. I-ին դարի կեսերին, երբ Հայաստանն աշխարհի հզորագույն պետություններից մեկն էր, Հայոց Տիգրան Մեծ արքան, կարևորելով Արցախի դերը, այստեղ է կառուցում իր անունը կրող 4 քաղաքներից մեկը՝ Արցախի Տիգրանակերտը: Այսօր էլ հին քաղաքի տեղում պահպանվել են դամբանաթմբեր, կոթողներ, ժայռափոր հարթակներ ու համալիրներ:

Իսկ քրիստոնեության ընդունումից հետո՝ 5-րդ դարում, հայկական գրերի ստեղծումից հետո Մեսրոպ Մաշտոցը հենց Արցախի Ամարասի վանքում հիմնադրում է առաջին հայկական դպրոցը:

Հայաստան-Արցախ-Սփյուռք՝ ահա այս հզոր կապն է, որի պահպանելու դեպքում կկարողանանք կերտել մեր երազանքների երկիրը: Սուրբ երրորդության կապն է ստեղծելու և հզոր միասնական գաղափարախոսությունն է լինելու մեր փրկությունը, որը պետք է սերմանել յուրաքանչյուր հայ մանկան մտքում, ով վաղը դառնալու է հայրենիքի արժանի զավակ:

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

30 տարի հետո՝ պատմության հեռանկարով

«Ցավը երբեք չի լռում, այն սպիանում է որոշ ժամանակ, իսկ երբ խոսվում է դրա մասին՝ վերքը թարմանում է»:

Հայաստանի նկարիչների միության «Մարտիրոս Սարյան» սրահում հունվարի 20-ից 29-ն անցկացվեց ցուցադրություն՝ նվիրված հայկական մեդիայում Ղարաբաղյան հակամարտության վերջին 30 տարիների ընթացքի լուսաբանմանը :

«Լրատուն. հակամարտության լրագրության դրվագներ» ցուցադրությանը ներկայացված էին թեմային առնչվող արխիվային տեսանյութեր, տպագիր մամուլի օրինակներ, ռադիոհաղորդումներ, լուսանկարներ ու հոդվածներ, վերլուծություններ, որոնց միջոցով այցելուները հնարավորություն ունեցան «տեղափոխվել» ռազմական գործողությունների թատերաբեմ, վերապրելով անցյալը: Սա հնարավորություն էր՝ վերհիշելու և նորովի գնահատելու ժամանակին կերտած հաղթանակն ու հետևություններ անելու այսօր ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

Սրահում վավերագրական ֆիլմերի ու մուլտիմեդիոն նախագծերի ներկայացման համար ընտրվել էին նոր տեխնոլոգիաներ՝ հպէկրաններ: Ցուցադրության օրերին տեղի ունեցան մասնագիտական քննարկումներ և լրագրողական նախագծերի ներկայացումներ: «Լրատուն» Մեդիա թանգարան նախագիծն իրականացրեց Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը:



Հունվարի 27-ի ցուցադրությանը ներկա էին նաև ՀՊՄՀ լրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսանողները, իսկ լրագրողներ Անահիտ Հարությունյանը, Գարիկ Հարությունյանը և Հայկ Խաչիկյանը «Հակամարտության պատմություններ» ծրագրի շրջանակում ներկայացրին իրենց պատրաստած նախագծերը:

Անահիտ Հարությունյանի «Պատերազմի սարդոստայնը» ֆիլմը ներկայացնում էր 44-օրյա պատերազմի ընթացքում գերության մեջ հայտնված և Հայաստան վերադարձած շիրակցիների պատմությունները:

Գարիկ Հարությունյանը ներկայացրել էր «Տողի անկումը» մուլտիմեդիոն նախագիծը, որը բաղկացած էր չորս մասից՝ գյուղի համար մարտերը, գյուղի մարդկային և տնտեսական կորուստները և գյուղի պատմական-իշխանական ժառանգությունը:

Հայկ Խաչիկյանի «Շուշիի ջնջված հասցեն» նախագիծը Ղազանչեցոց եկեղեցուն նայող բազմաբնակարան շենքի բնակիչների և նրանց ճակատագրերի մասին էր:

Հանդիպմանը ներկա տարբեր բուհերի լրագրության ֆակուլտետների ուսանողները տվեցին իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերում էին ռազմական գոտում աշխատող լրագրողների հոգեբանական պատրաստվածությանը, անվտանգ գործունեության կանոներին, Արցախի բնակիչների հետպատերազմական հոգեվիճակին և այլն:

Լուիզա ՍԱՐԳՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի
Հեռուստառադիոլարգրության բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի

ՄԵԿ ԺԱՄԸ ԿԱՐՈՂ Է ԵՐԵՔ ԿՅԱՆՔ ՓՐԿԵԼ

Ընդամենը մեկ ժամ տրամադրելով՝ դուք կարող ենք փրկել երեք մարդու կյանք:

Զարմանալի է հնչում, բայց այսօր ոչ բոլորը գիտեն արյան դոնորության մասին, որի շնորհիվ հազարավոր մարդիկ են վերադառնում կյանքի: Վիճակագրության համաձայն, յուրաքանչյուր երրորդ մարդն իր կյանքի ընթացքում արյան փոխներարկման կարիք է ունենում: Ամեն օր հազարավոր մարդիկ վնասվածքներով, այրվածքներով, քրոնիկ հիվանդությունների սրացումներով հայտնվում են հիվանդանոցներում: Նրանցից շատերին անհրաժեշտ է լինում արյան շտապ փոխներարկում: Ծանր հիվանդություններով տառապող մարդու համար յուրաքանչյուր րոպեն թանկ է, սակայն արյան և նրա բաղադրիչների հայթայթումը որոշակի ժամանակ է պահանջում, իսկ արյուն կարող է պետք լինել անհապաղ: Անհրաժեշտ է, որ դոնորությունը լինի կանոնավոր, ոչ թե շտապ. սա միակ միջոցն է՝ ապահովելու արյան բաղադրիչների մշտական մատակարարումը, ներառյալ՝ արտակարգ իրավիճակներից տուժածների համար:

Դոնորական արյունը շատ կարևոր է նաև մանկաբարձության և գինեկոլոգիայի, վիրաբուժական վիրահատությունների, արյունաբանական և ուռուցքաբանական հիվանդությունների բուժման գործում:

Արյուն նվիրելը նշանակում է ոչ միայն օգնել, այլև փրկել մարդկանց կյանքեր:

Ոչ բոլորը գիտեն, որ այդ օգտակար է հենց դոնորին: Արյունաբան Սվետլանա Բաբայանը մեզ հետ զրույցում պարզաբանում է, որ առողջ մարդուն դոնորությունը չի վնասում, իսկ արյունատվությունը չի կարող կախվածություն առաջացնել: Երկար ժամանակ արյուն հանձնող դոնորների երկարատև դիտարկումները, արյան դոնորության հետ կապված որևէ շեղում չեն հայտնաբերել: Գիտականորեն հիմնավորված չափաբաժիններով արյան դոնորությունը որոշակի խթանիչ ազդեցություն ունի, ուստի դոնորները մեծ մասամբ ակտիվ և կենսուրախ մարդիկ են: Արյան կանոնավոր դոնորները չեն ստիպում մարմնին «ավելի շատ արյուն արտադրել», սակայն սովորեցնում են արյան կորստից հետո ավելի արագ վերականգնվել: Արյան դոնորության ընթացակարգից առաջ դոնորը հետազոտվում է տրանսֆուզիոլոգի (փոխպատվաստաբանի) մոտ, որտեղ չափվում է նրա արյան ճնշումը, ինչպես նաև անցնում է թեստ՝ ՄԻԱՎ, հեպատիտ B և C, սիֆիլիս և այլ հիվանդությունների առկայությունը ճշտելու համար:



Ըստ առողջապահության միջազգային կազմակերպության, դոնորը պետք է արյուն կամ արյան բաղադրիչները նվիրաբերելուց մեկ-երկու օր առաջ սննդակարգից բացառի ճարպային, տապակած, կծու, ապխտած սնունդը, կաթնամթերքը, ձուն, կարագը: Արյան նվիրատվությունից առաջ ծխելը հակացուցված է: Դոնոր կարող է դառնալ 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի, ով բուժզննում է անցել: Բժշկական զննումից առաջ դոնորը պետք է լրացնի հարցաթերթիկ, որով բժիշկը տեղեկանում է դոնորի առողջական վիճակի: Հետևաբար, պատասխանները պետք է լինեն օբյեկտիվ և հակիրճ, հատկապես անցյալի հիվանդությունների մասին: Արյան հետազոտության ընթացքում ստացված առողջության մասին տեղեկություններն այլոց համար գաղտնի են, չեն բացահայտվում: Բացարձակ հակացուցումներին են պատկանում ՄԻԱՎ-ը, սիֆիլիսը, վիրուսային հեպատիտները, թոքախտը, թմրամոլությունը, ալկոհոլիզմը, 2-րդ և 3-րդ աստիճանի հիպերտոնիան, սրտի իշեմիկ հիվանդությունը, աթերոսկլերոզը, սրտի արատը, բրոնխիալ ասթման, բրոնխոէկտատիկ հիվանդությունը, թոքերի էմֆիզեման, բրոնխիտները, ստամոքսի և 12-մատնյա աղիքի խոցը, լյարդի խրոնիկ հիվանդությունները, ուժեղ կարճատեսությունը (6 Դ և ավելին): Կան նաև ժամանակավոր հակացուցումներ, որոնք ուժի մեջ են որոշակի ժամանակահատվածի համար:

Նախ, դոնոր կարող է դառնալ միայն 52 կիլոգրամից ավելի քաշ ունեցող մեծահասակը: Երկրորդ՝ արյուն չի կարելի հանձնել հղիության և լակտացիայի ժամանակ: Դաջվածք, պիրսինգ անելուց, սեռերի միջև բուժությունից, ցանկացած վիրահատությունից միայն վեց ամիս հետո կարող է մարդը արյուն նվիրաբերել, ինչպես նաև՝ ատամի հեռացումից 10 օր հետո, դաշտանից՝ 5 օր, ցանկացած չափաբաժին ալկոհոլ ընդունելուց՝ երկու օր հետո:

Սվետլանա Բաբայանը, այնուամենայնիվ, արյունը կարող է պահպանվել միայն սահմանափակ ժամանակով: Որպեսզի արյան դոնորությունը հասանելի լինի ամենուր և միշտ՝ որտեղ դա անհրաժեշտ է, բավարար թվով առողջ մարդիկ պետք է պարբերաբար կամավոր նվիրաբերեն այն:

Հ.Գ. Դուք կարող եք հաղթահարել արյուն նվիրելու վախը միայն այդ նույն արյունը նվիրաբերելով: Բայց հպարտության զգացումը, որ քո արյունը կփրկի ինչ-որ մեկի կյանքը, ավելի ուժեղ է, քան ցանկացած վախ: Ձեր արյունը հոսում է մեկ այլ մարդու երակներով: Ձեր արյունը ինչ-որ մեկի կյանքն է: Մարդկանց օգնելու համար հարյուրավոր ու հազարավոր դոլարներ պետք չեն: Ամենաթանկը բնությունն արդեն դրել է քո մեջ: Եվ ինչպես քո մոմից այլ մոմեր վառելով՝ կրակ չես կորցնում, այնպես էլ արյուն կիսելով՝ քո արյունը չի պակասում:

Միլենա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետի
Հեռուստառադիոլրագրության բաժնի
3-րդ կուրս ուսանողուհի

ՍԲ. ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐԻ ՏՈՆԸ

Հայ ժողովրդի սիրելի սրբերից է Սուրբ Սարգիսը, որին անվանվում են սիրահարների պահապան, ճանապարհին վտանգվածների ապավեն և բոլոր նեղյալների արագահաս օգնական: Ս. Սարգիսը հռչակվել է իբրև ամենահաղթ ռազմիկ՝ գթասիրտ քրիստոնյա և իր ունեցածը սիրով աղքատներին բաշխող:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Ս. Սարգիս զորավարի տոնը հռչակվել է Երիտասարդների օրհնության օր:

Սուրբ Սարգսի տոնը թեև մեր եկեղեցին տոնել է շատ ավելի վաղ ժամանակներից, սակայն Ս. Սարգսի վարքը հայերեն է թարգմանվել Ս. Ներսես Շնորհալու պատվերով:

Երիտասարդները պետք է իմանան Սուրբ Սարգսի պատմությունը և տոնի խորհուրդը:

Հուլիանոսի թագավորության ժամանակ նրան աստվածային հայտնությամբ թելադրվել է իր որդու՝ Մարտիրոսի հետ ապաստանել Հայաստանում, սակայն, հայերը վախենալով Հուլիանոսից, Սուրբին թելադրել են գնալ Պարսկաստան և ծառայության անցնել Շապուհ թագավորի մոտ: Այնտեղ նա մեղադրվել է պարսկական զորքի մեջ քրիստոնեություն տարածելու համար, բռնադատվել իր Մարտիրոս որդու հետ: Թագավորի հրամանով Սարգիսը բանտարկվել է: Նրան առաջարկվել է ուրանալ Հիսուսին և ընդունել զրադաշտական կրոնը: Երբ նա անսասան է մնացել իր հավատքի մեջ՝ արձակվել է գլխատման հրաման: Նահատակության վայրում (Դաղման կոչված քաղաքի մոտ), գլխատումից առաջ Ս. Սարգիսն աղոթք է հղել առ Աստված, որ ի կատար ածվեն իր անունով աղոթողների բաղձանքները:

Հավատացյալները թաքուն վերցրել են Սարգսի մարմինը և ամփոփել Համյան կոչված քաղաքում, որտեղից էլ, ըստ հայոց Հայսմավուրքների, Մ. Մաշտոցը վերցրել է Ս. Սարգսի մարմինը, բերել Հայաստան, ամփոփել Կարբի ավանում և վրան վանք կառուցել, ապա սրբի ատամներից մեկն առնելով՝ զետեղել է խաչափայտի մեջ և այն կանգնեցրել Վրաստանում՝Գագա բլուրի գագաթին, որը ցայսօր կոչվում է Գագա Սուրբ Սարգիս:

Սուրբ Սարգիսը հռչակված է ոչ միայն հայոց, այլև ողջ արևելյան քրիստոնեական աշխարհում: Նրա անունը, իբրև հրաշագործ վկայի, տարածված էր նաև Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում և այլուր:

Հայ մանրանկարչության մեջ Ս. Սարգիսը պատկերվել է ճերմակ նժույգի վրա, զինավառ կերպարանքով, հաճախ՝ վիշապ օձին նիզակահարելիս:

Ընտանիքների և սիրահարների պահապան սուրբը լինելով հանդերձ՝ Սուրբ Սարգիսը հայ ժողովրդի պատկերացումներում, այնուամենայնիվ, ավելին է, քան իր առօրյա և ամենօրյա արագահաս և ամենահաս օգնականն ու ապավենը, և գիտակցվում է որպես հայության պահապան հսկողը, ով հրեղեն իր ձիով իր տոնին նախորդող ուրբաթ գիշերը սլանում է Հայկական լեռնաշխարհով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Վաչե և Թամար Մանուկյան
մատենադարանի էջից

ՕՐՎԱ ԽՈՐՀՐԴԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ

Շնորհավոր տոնդ, Հայո՛ց բանակ... «Վա՜շտ, շարժվել, հրամանատարն է մտնում. հավսա՜ր, զգա՛ստ, քայլով մարշ»,- Երևանի № 117 մսուր-մանկապարտեզի ավագ «ա» խմբի սաների մասնակցությամբ կայացավ Հայոց բանակի կազմավորման 31-ամյակին նվիրված համերգ-միջոցառում: Գիշեր-ցերեկ, ցրտին ու սառնամանիքին մեր երկրի սահմանները պահող քաջ ու անվախ զինվորների, հրամանատարական կազմի, նրանցից ոչ պակաս կարևոր բժիշկների, խոհարարների բազմազբաղ ու հետաքրքիր բանակային առօրյան ներկայացրին մանկապարտեզի սաները: Օրվա խորհրդին համահունչ՝ մարտական ոգի, հայրենասիրական երգեր, ռազմապարեր.փոքրիկները նկատում են՝ Հայոց բանակն անկոտրում է, չընկճվող, որի հաղթանակած օրերը վերադառնալու են:

«Մենք էլ ունենք մեր տեղը Հայոց բանակում՝ և՛ կռվի, և՛ խաղաղ ժամանակ. մենք միշտ մեր զինվորների կողքին ենք»,- միջոցառման ընթացքում նշեցին աղջիկներն ու հորդորեցին պատասխանատուներին՝ իրենց էլ վստահել հայրենի երկրի սահմանը, որ բանակն ավելի սիրուն լինի:

Դաստիարակ Սաթենիկ Քմեթյանի նախաձեռնած յուրատեսակ հայրենասիրական դասն ու Հայոց բանակին նվիրված միջոցառումն ավարտվեց փոքրիկների բարեմաղթանքներով:

Երևանի № 117 մսուր-մանկապարտեզի ավագ «ա» խմբի սաները լիահույս են, որ Հայոց բանակը միշտ է լինելու հզոր, ամուր և ուժեղ, իսկ հայ զինվորը՝ հպարտ:

«Թող ամպեր չլինեն մեր ջինջ երկնքում, մեր հողերը բերք ու բարիքով ծաղկեն, և խաղաղությունն իշխի ամբողջ աշխարհում»,-նշեցին նրանք՝ երկինք բաց թողելով խաղաղություն ավետող աղավնիներ:

«31 տարի մեր երկիրն ունեցել է հզոր և հաղթանակած բանակ, ցավոք, այն այսօր չի ապրում իր լավագույն ժամանակները: Վստահ եմ, սակայն, որ մեր Հայոց բանակը կհզորանա և իր նախկին փառքը կունենա. այդ գործում իրենց կարևոր տեղն ու դերն ունեն գալիք սերունդները, մեր ապագա զինվորները»,-նշեց տնօրեն Հայկուհի Տեր-Նազարյանն ու ընդգծեց՝ հայկական տոնացույցի ու մեր երկրի համար ամենակարևոր օրը երեխաները հիշելու են նաև այս միջոցառման շնորհիվ:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

ԱՆՑՅԱԼԻՑ ԴԵՊԻ ԱՊԱԳԱ

Սույն թվականի հունվարի 23-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում հերթական դասընթացներին զուգահեռ անցկացվեց թեմատիկ բաց դաս՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 31-ամյակին:

Նման միջոցառումները նպաստում են, որ հայրենիքից հեռու գտվող մոսկվայաբնակ աշակերտները լավ ճանաչեն սեփական պատմությունը, իմանան հերոսներին և նրանց սխրագործությունները, ինչպես նաև գիտակցեն իրենց ուժն ու հնարավորությունները՝ ի բարօրություն մայր Հայաստանի:

Հատկանշական է, որ այդ կարևոր օրվա հյուրն էր մեծ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի թոռնուհի Պոլինա Բաբաջանյանը, ով դպրոց էր այցելել տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով: Հատկանշական է, որ նա և իր որդին՝ Առնո Բաբաջանյան կրտսերը, ևս ուսանել են ,Վերածնունդե դպրոցում:

Հյուրերին ջերմությամբ ընդունեցին դպրոցի սաները, ովքեր պատրաստել էին զեկույցներ, բանաստեղծություններ, երգեր, ինչպես նաև Առնո Բաբաջանյանի ստեղծագործություններով հագեցած ծրագիր: Մասնավորապես հնչեցին մաեստրոյի դաշնամուրային կատարումները: Ընդգծենք, որ «Վերածնունդ» դպրոցի այդ սաները բազմիցս պատվավոր տեղեր են զբաղեցրել տարբեր միջազգային հեղինակավոր մրցույթներում:

Հատկանշական է, որ այս հանդիպումն ավարտվեց ,Ազգ փառապանծե երգի կատարումով, որն էլ ընդգծեց օրվա խորհուրդը՝ հայոց բանակի անկոտրում ոգին և շենացնող ազգի ճանապարհը՝ անցյալից դեպի ապագա:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԴՊՐՈՑ - ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

ԱՅՍՕՐՎԱ ԱԶԱԿԵՐՏԸ ՎԱՂՎԱ ԶԻՆՎՈՐՆ Է

Հայկական տոնացույցի ամենակարևոր և ամենապատասխանատու օրերից մեկն է հունվարի 28-ը: Սա տոն է, որ հպարտությամբ են նշում Հայաստանում, սա օր է, որ հայ ժողովրդին համոզեց՝ պայքարը չի ավարտվել ու նոր հաղթանակները դեռ առջևում են:

Հունվարի 28-ը Հայկական բանակի կազմավորման օրն է, 31-րդ տարեդարձը: Ինչպես տարիներ առաջ, այնպես էլ այսօր Հայկական բանակն է հայ ժողովրդի անվտանգության միակ ու հաստատուն երաշխավորը: Հայ ժողովուրդը դարեր շարունակ կենաց-մահու կռիվ է մղել պատմական հայրենիքի, ազգային գոյության, ինքնության համար՝ կերտելով այն, ինչ հետո պետք է անվանվեր Հայոց ազգային բանակ: Հայոց բանակի ծնունդը մեր ժողովրդի հավաքական կամքի, ուժի, նվիրվածության, հայրենասիրության արգասիքն է: Հայոց բանակը դարձավ յուրաքանչյուր հայի, ողջ ժողովրդի պաշտելի զավակը: Մեր զինվորների հայրենասիրությունն ու քաջությունը սահմաններ չունի, ինչի մասին են վկայում նրանց առյուծասիրտ մարտերը:

Հայրենասիրությունը սկսվում է դպրոցից. այսօրվա հայրենասեր աշակերտը վաղվա զինվորն է և քաղաքացին:

Հայոց բանակի 31-րդ տարեդարձի օրը Հայոց բանակին և հայ զինվորին շնորհավորեցին, երախտիքի ու խոնարհումի խոսք ասացին նաև Իջևանի № 4 հիմնական դպրոցի II բ դասարանի սաները՝ դասվար Քրիստինե Ղազարյանի գլխավորությամբ: Միջոցառումը համեմված էր երգով, պարով, շնորհակալական ջերմ խոսքերով:

Նաև հարգանքի տուրք մատուցեցին 44-օրյա պատերազմում հերոսացած նույն դպրոցի սաՙ Մանվել Գալստյանի հիշատակին:

Խորին հարգանք ու խոնարհում հայ զինվորին և նրա սրբազան գործին:

Իջևանի № 4 դպրոց

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համալսարանից ազատված կամ հեռացված բոլոր այն ուսանողները, ովքեր ցանկանում են վերականգնել իրենց ուսանողական իրավունքները, համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1676-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի 12-րդ և 20-րդ կետերի, ուսանողական իրավունքների վերականգնման դիմումներն առկա համակարգում պետք է ներկայացնեն կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում:

Առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումները ներկայացնել 2023 թվականի հունվարի 26-ից փետրվարի 22-ը ներառյալ:

Հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումները ներկայացնել 2023 թվականի մայիսի 15-ից հունիսի 2-ը ներառյալ:

Ուսանողական ակադեմիական հետագծի (շարժի) կազմակերպման բաժին

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 9.02.2023 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ